

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/05**

ք. Երևան

20 մայիսի 2020 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Եղիազարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Բյուզանդի 1/3 հասցեում գտնվող ՄՍ գրասենյակի վերակառուցման և ընդլայնման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 120-րդ օրը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու

փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են ն իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## **5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 37209420 (երեսուներեք միլիոն երկու հարյուր ինը հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ, որից 6201570 (վեց միլիոն երկու հարյուր մեկ հազար հինգ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 31 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

### 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կադաստրի կոմիտե  
ք. Երևան Արշակունյաց 7  
Հ/Հ 900011030658  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր  
քարտուղար----- Ա. Թովմայան  
(ստորագրություն)  
Կ.Տ.



#### ԿԱՊԱԼԱՌՈՒ

Էլիտ Հիլզ ՍՊԸ  
Արմավիրի մ գ Բամբակաշատ 14/1 տ3  
Հայթիզներանկ ՓԲԸ  
Հ/Հ 1150014351360100  
ՀՎՀՀ 04421922

տնօրեն----- Հ. Եղիազարյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.



*[Handwritten signature]*

*[Handwritten signature]*

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ\***  
**ԲՅՈՒՋԱՆԴԻ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄՍ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	<b>1. Քանդման աշխատանքներ</b>				
1	Գիպսակարտոնե միջնորմների քանդում	մ2	305,0		
2	10սմ հաստությամբ միջնորմի քանդում	մ3	7,2		
3	40սմ հաստությամբ փուֆե շարվածքի քանդում	մ3	0,9		
4	Գրանիտ սալերով հատակների քանդում	մ2	57,36		
5	Խեցե սալերով հատակների քանդում	մ2	44,02		
6	Կերամոգրանիտ սալերով հատակների քանդում	մ2	43,57		
7	Ց/ավազե հարթեցնող շերտի քանդում 30մմ հաստ	մ3	15,7		
8	Ց/ավազե հարթեցնող շերտի քանդում 20մմ հաստ	մ3	1,1		
9	Լամինատ հատակի քանդում	մ2	360,63		
10	Գաջե ծեփի մաքրում պատերից	մ2	40,0		
11	Պլաստմասե վահանակից կախովի առաստաղի ապամոնտաժում	մ2	43,1		
12	Գիպսակարտոնե առաստաղի քանդում	մ2	65,0		
13	Գաջե ծեփի մաքրում առաստաղից	մ2	14,0		
14	Լապեա ներկի մաքրում պատերից	մ2	227,2		
15	Լապեա ներկի մաքրում առաստաղից	մ2	111,6		
16	Պատերից կերամիկական սալերի քանդում	մ2	119,0		
17	Պատերից ցեմենտալակային հարթաշերտի քանդում	մ2	119,0		
18	Մետաղապլաստ դռան ապամոնտաժում պահեստավորմամբ	մ2	18,90		
19	Մետաղապլաստ պատուհանների ապամոնտաժում պահեստավորմամբ	մ2	8,82		
20	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում պահեստավորմամբ	մ2	3,4		

21	Առասաղից լուսափունների ապամոնտաժում	հափ	44		
22	Անջափիչների և վարդակների ապամոնտաժում փուփով	հափ	38		
23	Օդորակիչների ապամոնտաժում պահեստավորմամբ հետագայում փեղադրմամբ	կ-փ	6		
24	Շին աղբի փեղափոխում շենքից դուրս	փ	211,3		
25	Առաջացած շին. աղբի բարձում, փեղափոխում 7կմ հեռ. վրա	մ3	117,4		
	Ընդամենը				
	Ընդամենը (%)				6,9
	2. Շինարարական աշխատանքներ				
1	Խամքարարչուկե սալիկներով միջնորմների կառուցում h=100մմ	մ2	149,52		
2	Ցեմենտավազային շաղախով անցքերի լցում	մ3	0,46		
3	Ամրան AIII դասի միջնորմների ամրակապման համար	կգ	71,00		
4	Ամրան AI դասի միջնորմների ամրակապման համար	կգ	22,0		
5	Անկյունակ L50x4	մ	32,0		
6	Ե/բ միաձույլ բարավորների պատրաստում B12,5 դասի բետոնից	մ3	0,13		
7	Ամրան AIII դասի միջնորմների ամրակապման համար	կգ	31,00		
8	Ամրան AI դասի միջնորմների ամրակապման համար	կգ	12,0		
9	Ապամոնտաժված մեքալուպլաստե դռների վերափեղադրում	մ2	11,34		
10	Թրծված ապակուց 12մմ հաստ դռների փեղադրում երկկողմանի բացվող ներառյալ բռնակների փականները	մ2	5,13		
11	Պողպատե խողովակների փեղադրում 60*60*2 մմ	մ	9,0		
12	Մեքաղական էլեմենտների երկշերտ յուղաներկում	մ2	2,16		
13	Մեքաղապլաստե վիրաժների փեղադրում դուռ-պատուհան	մ2	55,20		
	Հատակներ				
1	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների փակ	մ2	586,24		

2	Լամինարե ծածկույթի իրականացում 9մմ հաստությամբ ներառյալ պարալոնի շերտը և շրիշակները 71 գծմ	մ2	93,69		
3	Ջրամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտի իզոգամով	մ2	37,11		
4	Խեցեսալե հատակների իրականացում	մ2	55,12		
5	Կերամոգրանիտե հատակների իրականացում 60*60սմ	մ2	433,40		
6	Կերամոգրանիտե շրիշակների իրականացում 10սմ	մ2	12,10		
7	Ծածկի անցքերի փակում B15 դասի բետոնով	մ3	0,34		
	Մուրքի կազմակերպում				
1	III կարգի գրունտի քանդում ձեռքով	մ3	3,2		
2	Միաձույլ հիմքերի իրականացում B15 դասի բետոնով	մ3	3,2		
3	Մուրքի հատվածի մեկտաղակամ ասփիճանների և հովհարի հիմնակմաղքի պատրաստում և տեղադրում	տ	0,68		
4	Մեկտաղակամ էլեմենտների երկշերտ յուղաներկում	մ2	27,5		
5	Գլխավոր մուրքի ասփիճանները և հարթակը երեսասպարել բազալտե սալիկներով d=30մմ	մ2	10,08		
6	Գունավոր պրոֆիլավոր թիթեղի իրականացում d=0.5մմ հաստության	մ2	3,40		
7	Գունավոր հարթ թիթեղի իրականացում d=0.5մմ հաստության	մ2	1,04		
8	ՊՎԲ նյութից ծածկարանի երեսասպարում	մ2	4,4		
9	Անցքերի շաղափում պատի և ծածկի մեջ L=300մմ	հատ	9		
10	Մայթի սալիկների տեղադրում	մ2	14,6		
11	Խճի նախաշերտի իրականացում	մ3	0,73		
12	Ավազի խառնուրդի իրականացում	մ3	0,73		
13	Բազալտե եզրաքարերի տեղադրում 80x150 մմ չափերի բետոնե հիմքի վրա (B15 դասի)	մ	13,10		
	Հարդարման աշխատանքներ				
1	Պատերի գաջե սվաղում, բարելավված որակի	մ2	280,73		
2	Պատերի սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ2	130,36		

3	Պարտերի երեսապատում հախճասալով	մ2	130,36		
4	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում, հիմնակմախքի պատրաստումով	մ2	37,11		
5	Մեքաղական հարդարման անկյունակներ	մ	240,0		
6	Կոյուղու կանգնակների երեսապատում ջրակայուն գիպսաստվարաթղթով 12,5մմ մեքաղական հինակմաղքով	մ2	2,16		
7	Առաստաղի գաջե սվաղում, բարելավված որակի	մ2	32,00		
8	Դռների և պատուհանների շեպերի գաջե շաղախով	մ2	12,00		
9	Պարտերի և շեպերի ծեփամածկում և ներկում լապեքսային ներկով	մ2	598,14		
10	Առաստաղից հեռուստացույց ամրացնելու մեքաղական հիմնակմախք	հատ	4		
11	Առաստաղի ծեփամածկում և ներկում լապեքսային ներկով	մ2	546,1		
12	Կախովի առաստաղի պատրաստում գիպսաստվարաթղթե սալերով մեքաղական հինակմաղքով	մ2	420,48		
	Ընդամենը				
	Ընդամենը (%)				53,3
3. Ջեռուցման համակարգ					
1	Այլումինե ջեռուցման սարքերի տեղադրում 0.12կՎտ H=0.5մ, ΔT=50 (42 սեկցիա)	էքմ	10,1		
2	Այլումինե լավորակ մարտկոցների արժեքը	սեկցիա	42,0		
3	Պոլիպրոպիլենե խողովակներ այլումինե շերտով տաք ջրի համար Φ40 PN20, փորձարկումով	մ	42,0		
4	Պոլիպրոպիլենե խողովակներ այլումինե շերտով տաք ջրի համար Φ32 PN20, փորձարկումով	մ	74,0		
5	Պոլիպրոպիլենե խողովակներ այլումինե շերտով տաք ջրի համար Φ25 PN20, փորձարկումով	մ	80,0		
6	Պոլիպրոպիլենե խողովակներ այլումինե շերտով տաք ջրի համար Φ20 PN20, փորձարկումով	մ	56,0		
7	Համակարգի լվացում և փորձարկում	մ	252,0		
8	Ջեռուցիչների վերևի փական Φ15մմ	հատ	21		

9	Ջեռուցիչների ներքևի փական $\Phi 15$ մմ	հապ	21		
10	Անցքերի բացում ծածկերում, միջորմներում և պատերում $150 \times 150$	տեղ	7		
11	Անցքերի փակում	մ3	0,032		
12	Պլաստիկ ծալքավոր խողովակից պատյան $\Phi 40$ , փորձարկումով	մ	2,4		
13	Պլաստիկ ծալքավոր խողովակից պատյան $\Phi 32$ , փորձարկումով	մ	12,0		
14	Մերաղական խողովակից պատյան $\Phi 50$ $l=0.5$ մ (6հապ)	մ	3,0		
15	Ջեռուցման սարքերի մոնտաժային կոմպլեկտ	հապ	21		
16	Պոլիպրոպիլենե խողովակի ձևավոր մասեր $\Phi 32-40$	հապ	80		
17	Պոլիպրոպիլենե խողովակի ձևավոր մասեր $\Phi 20-\Phi 25$	հապ	100		
18	Ջեռուցման խողովակների ամրակապիչներ տեղադրումով	հապ	350		
19	Ապահովիչ փականի տեղադրում DN25	հապ	9		
20	Հերադարձ փական $\Phi 40$	հապ	2		
21	Հերադարձ փական $\Phi 32$	հապ	4		
22	Գնդային փական $\Phi 40$	հապ	2		
23	Գնդային փական $\Phi 32$	հապ	4		
24	Դարարկման փական $\Phi 20$	հապ	2		
25	Ջրի մաքրման ֆիլտրի $\Phi 40$	հապ	2		
26	Ջրի մաքրման ֆիլտրի $\Phi 20$	հապ	2		
27	Հատակներում ակոսների բացում խողովակաշարերի տեղադրման համար	մ	15,0		
28	Ակոսների վերականգնում B15 դասի բեպոնով	մ3	0,38		
29	Պոլիպրոպիլենե խողովակներ ապամոնտաժում ձևավոր մասերի հետ միասին	մ	164,0		
30	Պոլիպրոպիլենե խողովակներ վերամոնտաժում	մ	40,0		
31	Առկա ալյումինե ջեռուցման մարտկոցների վերատեղադրում	հապ	18		
32	Օդափար ցինկապատ թիթեղից $d=0,7$ մմ տեղադրումով $d=150$	մ2	8,0		
33	Օդափոխության ճաղաշար $1500 \times 150$ , տեղադրումով	հապ	4		
	Ընդամենը				
	Ընդամենը (%)				8,0
	4. Ջրամատակարարում և Ջրահեռացում				

	Ջրամատակարարում ցանց				
1	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում $\Phi 32$ PN10, փորձարկումով	մ	4,0		
2	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում $\Phi 25$ PN10, փորձարկումով	մ	6,0		
3	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում $\Phi 20$ PN10 փորձարկումով	մ	12,0		
4	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում $\Phi 15$ PN10 փորձարկումով	մ	10,0		
5	Համակարգի լվացում և փորձարկում	մ	32,0		
6	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր $\Phi 32-15$	հապ	40		
7	Գնդային փական $\Phi 32$ , մոնտաժումով	հապ	1		
8	Գնդային փական $\Phi 25$ , մոնտաժումով	հապ	1		
9	Գնդային փական $\Phi 20$ , մոնտաժումով	հապ	5		
10	Ծորակ խառնիչ լվացարանների համար	հապ	4		
11	Ծորակ խառնիչ խոհանոցակոնքի համար	հապ	1		
12	Ճկուն խողովակ զուգարանակոնքի լվացման փակառիկի համար $d=15$ , $L=0.5$ մ	հապ	4		
13	Էլեկտրական ջրամաքացուցիչ $V=50$ լ	հապ	1		
	Կոյուղու ցանց				
1	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում $\Phi=110$ , ռեպինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	12,0		
2	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում $\Phi=50$ , ռեպինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	13,0		
3	Պոլիէթիլենային խողովակների ձևավոր մասեր $d=110$ մմ	հապ	10		
4	Պոլիէթիլենային խողովակների ձևավոր մասեր $d=50$ մմ	հապ	9		
5	Սփուրիչ $d=100$ մմ	հապ	2		
6	Հոսակ $d=50$ մմ	հապ	2		
7	Ուղղանկյուն խեցե լվացարան շաձև սիֆոնով	կ-տ	4		
8	Զուգարանակոնք թեք թողարկով ցածր տեղակայքով լվացման փակառիկով	կ-տ	4		
9	1 բաժանմունքով խոհանոցակոնք շաձև սիֆոնով	կ-տ	1		
10	Կերամիկական լվացարան ապամոնտաժում հանձնում պատվիրատուին	հապ	4		

11	Կերամիկական զուգարանակոնքի ապամոնտաժում հանձնում պատվիրատուին	հատ	4		
12	Մեքալուպլաստե և պոլիէթիլենե խողովակների ապամոնտաժում	մ	78,0		
13	Մեքաղական և թուջե խողովակների ապամոնտաժում	մ	14,0		
	Ընդամենը				
	Ընդամենը (%)				2,0
	5. Էլեկտրական լուսավորություն				
1	Լուսադիոդային լուսատու 40վր, առաստաղային, ձևը՝ ուղղանկյուն 600x600մմ, լուսային հոսքը 3800լմ, լուսային արդյունավետությունը 95լմ/վր, լույսի ջերմաստիճանը 4000K լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	94		
2	Լուսադիոդային լուսատու 18վր, IP54 առաստաղային՝ կլոր $\Phi$ 425մմ, լուսային հոսքը 1710լմ, լուսային արդյունավետությունը 95լմ/վր, լույսի ջերմաստիճանը 4000K լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	1		
3	Լուսադիոդային լուսատու 7վր, IP54, ձևը՝ կլոր $\Phi$ 125մմ, լուսային հոսքը 630լմ, լուսային արդյունավետությունը 90լմ/վր, լույսի ջերմաստիճանը 4000K լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	13		
4	Լուսադիոդային լուսատու վթարային 10վր, ձևը ուղղանկյուն, Exit նշանով	հատ	4		
5	Լուսադիոդային լուսատու վթարային 10վր, ձևը ուղղանկյուն, ներսարքված մարկոցով	հատ	14		
6	Հաղորդալար պղնձե ջիղերով, մեկուսացված, հարվածքը 4մմ <sup>2</sup> ПВЗ	մ	1500,0		
7	Հաղորդալար պղնձե ջիղերով, մեկուսացված, հարվածքը 2,5մմ <sup>2</sup> ПВЗ	մ	3200,0		
8	Պոլիվինիլքլորիդե այրմանը չնպաստող էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ $\Phi$ 20	մ	1560,0		
9	Անջատիչ միատակ 220Վ, 6Ա	հատ	6		
10	Անջատիչ երկտակ 220Վ, 6Ա	հատ	8		
11	Երկբևեռ խրոցակային վարդակ, երրորդ հողանցման հպակով, 220Վ, 10Ա, խոնավադիմացկուն	հատ	62		

12	Հարակադիր փուփ հողանցման կոնսուրով կափարիչով, 4 խրոցակային վարդակով +1IP վարդակի համար, 220Վ, 10Ա	հափ	17		
13	Տուփ անջարիչների, խրոցակային վարդակների փեղադրման համար	հափ	76		
14	Ճյուղավորիչ փուփ	հափ	20		
15	Երկաթակապ , փեղադրումով	հափ	3900		
16	100մմ-200մմ հաստության միջնորմի մեջ անցքի բացում	փեղ	7		
17	500մմ հաստության պափի մեջ անցքի բացում	փեղ	2		
18	Պարփերի մեջ ակոսների բացում	մ	300,0		
19	Անցքերի փակում B15 դասի բեփոնով	մ3	0,32		
	Ընդամենը				
	Ընդամենը (%)				16,5
	6. Էլեկտրաուժային սարքավորումներ				
1	Լուսավորության վահանակ, դռնակով(36 մոդուլի համար)	հափ	1		
2	Ավտոմատ անջարիչ 380Վ,63Ա	հափ	1		
3	Ավտոմատ անջարիչ 220Վ,25Ա	հափ	10		
4	Ավտոմատ անջարիչ 220Վ,16Ա	հափ	5		
5	Դիֆերենցիալ ավտոմատ անջարիչ 220Վ,32Ա	հափ	1		
6	Մագնիսական թողարկիչ ջերմային ուլեով կառավարման կոճակներով 220Վ, 16Ա	հափ	2		
7	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված, հափվածքը 5x16մմ <sup>2</sup> ВВГнг	մ	20,0		
